

4208

Թիֆլիսի ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ՀԵՂԵՐՈՒԹԻՒՆ

№ 148

16

Ա. Մ. ՄԻԽԱՅԼԻԿԻ

ԿՈՐԱՄԱՆԿ ԱՊՈՒԵՍԼ

Փակագրեց

ՊԵՐԱ ՊԴՈՇԵԱՆՑ

ՄԱՆՈՒՍԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1921

891.71
U-56

ԹԻՖԼԻՍ

Արագատիպ ՄՆ. Մարտիքոսեանցի

Միքայէլիան փողոք № 81.

1898

269/8

12003

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 148

Տյառ

891.71
Ա-56

Ա. Մ. Ա Լ Ի Վ Ի Ց Կ Ի

ԽՈՐԱՄԱԿ ԱՂՋԻԱԼ

1002
1699

Փ ռ ի ս պ ե ց

Պ Ե Ր Ա Պ Ա Ռ Ո Շ Ե Ա Ն Ց

Մ Ա Ե Վ Ա Վ Ա Ն Վ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

— Օ Զ Հ Օ Հ — Է Զ Հ օ օ —

Թ Ի Փ Լ Ի Ա

Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի

Միքայելան փողոց, № 81.

1898

2011

37555-60

881 88

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ


Доз. цензурою, Тифлисъ, 8-го Июня, 1898 года.

20985-60

α

9

- 3 -



Ա.

Երու ամառ մեր տանը մի փորձանք պատահեց:

Քամին մտաւ մեր պառաւ Զարման դայեակի քիթը. մի իրիկնապահ մեզ թողեց ու զնաց անտառ՝ սունկ հաւաքելու: — Կորչում հօ չեմ, ասաց, ժանգառքը դեռ չկոխած՝ տանը կլինիմ: Բայց արի տես, որ ժանգառքն էլ կոխեց, ճրագներն էլ վառեցին ու հանգցրին, և մեր Զարման տատը չկայ որ չկայ: Էլ ում աշքը քուն կգար. մայրիկս որ տաես, գլուխը բարձին չգրեց, շուտ-շուտ զնում էր բակի զուան սողնակից ականչ զնում ու ախ ու վախ անելով յետ գալիս. մենք երեխէքս անկողիններիս վրայ վէր ենք թափուել ու զուցը դրել. մինչև քունն աշքերս չկոխեց՝ ձայներս չկտրեցինք. իսկ նազլու քուբիկս քնած տեղն էլ սիրտը չէր կարողանում բռնել, անդադար երազումը Զարման տատի էր կանչում:

Առաւոտը բանը պարզուեց: Դու մի ասեր, անտառումը գազաններ բռնելու համար մի փոս է եղել փորուած. պառան, զու պառան, զնա ու թրը՝ մի, կունդիկ արա փոսի մէջ: Կրակն էս է, որ Զարմանից առաջ փոսն են ընկած լինում մի զայլ ու մի աղուէս: Այդ երեքը միասին երկիւղից մինչև ծէզը

բացուելը համեստ ու յարդեոր հարսի պէս կուշ են եկել, մասցել նստած: Լուսաղէմին որսորդը սայլակը լժած՝ գալիս դրանց զլխավերել տնկում է: Յած մտիկ տայ, ինչ տեսնէ—իր փոսը գազաններով լցուել է: Որսորդը հինց կարծում է, թէ մեր պառաւ Զարմանն էլ գազան է, իբրև թէ արջ է, որ թոնթոկ տալով՝ եկել, զլորուել է փոսի մէջ: —Հինց քեզ մատաղ, որսորդ ախալէր, փոսի միջից մղկտալով կանչում է Զարմանը. ազատիր ինձ այս նեղ վիճակից:

Գիւղացի որսորդը սարսափում, սասանում է. բերանն երկու գազ ճոթուում է, աչքերը գորտի աչքերի պէս դուրս է պրծացնում, կոները յետ է փոռում ու մնում շուտարած:

Վերջը, երբ խելքը մի քիչ զլուխն է հաւաքում՝ գոչում է.

—Քո տունը չքանդուի, այ պառաւ, քիչ մնայ՝ սիրտս պատուէիր. օօօֆֆֆ... միսս սրթսրթում է. տօ, դու այդ ինչ տեղն ես ընկել:

Ի՞նչ անէր որսորդը. տալիս է գայլին, շանսատակ անում ու մինչեւ պառաւին ազատելը՝ աղուէսը մի հնարքով ծլկում է, ու փախիր որ կփախչես:

Ահա որսորդը մեր պառաւին սայլակին նստացրած բերեց. եթէ տեսնէիք, ինչ օրն էր ընկել. երեսը՝ ոնց որ պատի ծեփ:

Հաւաքուել ենք երեխէքս, դայեակ Զարմանի չորեք կողմը բոլորել, շունչ չենք տալիս որ քաշի, հարցմունք հարցմունքի յետնից կարկտի պէս ամեն կողմից տեղում ենք զլխին:

—Ըուտ արա, Զարման տատի, պատմիր, տեսնենք

ինչ եղաւ, ինչ չեղաւ. գայլն ինչ էր անում, աղուէսը մնց էր:

Զարմանի սիրտն ու մեր սիրտը իսկի իրար չեն բռնում. սկզբումը՝ թէ նրան ասած թէ այս սառը քարին—ձայնը կտրել մնացել էր: Հնար կար, կարող էր մեր ձեռիցն ազատուել. վերջը երբոր տեսաւ, թէ սև ձթի պէս կպել ենք ու պոկ չենք գալիս՝ ուսերը վեր քաշելով ասաց.

—Ճարս ինչ, պիտի պատմեմ. բայց եթէ ինձ սիրում էք՝ թողէք մի քիչ հանգստանամ, մի քիչ խելքս գլուխս հաւաքեմ:

Ուրախանանաս, ինչ որ մենք ուրախացանք, ծափ տուինք ու թռչկոտացինք:

Նախաճաշիկն արինք պրծանք, Զարման տատը մեղ ժողովեց իր զլխին ու սկսեց իր պատմութիւնը:

Բ.

—Ի՞նչ ասեմ, այ ձեղ մատաղ, սկսեց Զարմանն իր պատմութիւնը:

Թըը՝ մը ընկայ փոսն ու աչքերս սկացան: Ձեռներս երկինք բարձրացըրի ու սկսեցի աղօթք անել: Մէկ էլ շուրջս նայեմ՝ ինչ տեսնեմ. միայն ես հօշեմ. այս կողմս գայլն է պաղզել, նազլուիս նստած տեղը՝ աղուէսն է ականջները խլացըրել. նստել են ու աչքերը քցել ուղիղ իմ աչքերի պտղի մէջ: Վերջին օրդ է, Զարման, մտքումս ասացի և սկսեցի ձեռքս Աստուծոյ փէշը գցել. երկիւղից տեղիցս շեմ շարժւում, բայց անդադար աղօթում եմ.—քեզ

Եմ կանչել, Արարիշ Աստուած, դու ինձ օղնական պահապան եղիք: Մէկ էլ աշքիս պոշովը մտիկ եմ տալիս՝ էս քո աղուէսը քիշ-քիշ զետնասոթ տալով մօտեցաւ գայլին: Կպաւ շար գագանին ու փափսաց.

—Գայլ ախպէր, շնորհքներդ որ օրուայ համար ես պահել, ինչու չես պառաւին ձկում, պատուսորում. ինչ է, վախում ես, չկարողանա՞ս. ձեռիցն ինչ կղայ: Գոնէ վեցջին անդամ մի կուշտ իրիկնահաց անուշ անենք: Բայց ես տեսնում էի, որ գայլի ժուքը ինձանից աւելի էր բերանումը ցամաքել. իւղճի մէջը զօրութիւն մնացել էր, որ մարդ ասուած արարածի վրայ յարձակուի:

—Զեռք քաշի, Աստուած կսիրես, աղուէս բաջի, կմկմաց գայլը. ինչ իրիկնահաց, ինչ ճաշ. այս օրին հաց կուլ կերթայ:

Յետոյ սկսեցին գայլն ու աղուէսն իրար հետ խօսք ու զըոյց անել:

—Գայլ ախպէր, հարցրեց աղուէսը, քո բունդ, քո բնակարանդ ինչ տեղ է:

—Հերիք է, խորամանկ, հերիք, խեղճ ես եղել, փէշերիդ ծունդ դնելու է իրքի թէ չպիտես իմ նիստ ու կացի տեղը. հապա այն ով էր, որ իմ քոթոթների ձեռից տողիկ սազը յափշտակեց ու տարաւ:

Այս որ լսեց աղուէսը՝ երկու զագ տեղիցը ծըլունդ եղաւ:

—Աչքիս լոյս, ասաց, այդ ինչ նոր բան հնարեցիք: Եյդ կարելի է իմ աղգականներից մէկն արած լինի, թէ չէ ես ոչինչ չդիտեմ: Ինչիս է



պէտք քո սագը, մկներ քիչ կան. այնքան կուտեմ, որ փորս փշած տկի պէս կտողի:

— Հըըը՝ ժպտաց դայլը, մկների տեղ որ գիտենայիր՝ այս վոսի մէջ հօ չէիր զլորուի:

— Ի՞նչ անենք, գայլ ախպէր. մուկը որսալու համար աշխատանք պիտի անել, զլխացաւանք պիտի քաշել, իսկ այստեղ վափուկ մսի կտորը պատրաստ դրուած էր:

— Ամաշիր, ամաշիր, յանդիմանեց աղուէսին այդ խօսքի համար գայլը:

— Հօ գիտէր, երեխէք, որ աղուէսը խորամանկ ու հնարագէտ է, ասաց մեզ Զարման տատը. լսեցէք թէ ձեռաց ինչ սարքեց ու հնարեց:

— Գիտես, գայլ ախպէր, քո սագիդ վախցնողն ով էր:

— Ո՞վ էր հարցըն գայլը:

— Տեսնում ես, բանից խաբար չես ու ինձ ես զուր բամբասում: Քո սագը տարել է այն աղուէսը, որ բնակում է անտառի խորքումը, ձորի միջին: Ես գարունքը նա ութը հատ ձագ հանեց. վախցաւ, որ անտէր վէր քցի ու հեռանայ. քեզ հօ յայտնի է, որ գագանների ձագերի աշքերը երկու շաբաթ վակ են լինում: Մտածեց մեր խաթուն ծննդկանը ու իր մարդին որսի ղրկեց... Հէնց այդ ժամանակն էր, որ ես նրան պատահեցի ու տեսայ, որ դմբուճիկ սագը բերանին տուն էր գալիս: Խնամի, հարցըն նրան, այդ տուով որսը ո՞րտեղից ճանկեցիր: — Գիւղի այն երեսիցը, պատասխանեց սատանայ աղուէսը: Սագի վրայ ողջ տեղ չէր մնացել, վետրահան էր եղել ու քրքրուել: Մտքումս

ասացի, ոնց երեսում է՝ ուրիշի ապրանք է ճանգել. հէնց քո սասածն է, գայլ ախպէր, սագը քոնն էր որ կար: Մի քանի օր սրանից առաջ, մի իրիկուն, շարունակեց աղուէսը, ես անց էի կենում նրանց բնի մօտովը, հայրն ու մայրը տանը չէին. ձագերն ինձ պատմեցին, որ մի գայլ մարադ մտնելով մօտեցել է իրանց բնին. հեռուից, ասացին, հէնց որ գայլի ոտքերի խշխոցը լսեցինք՝ ներս պրծանք բունը և կուշ եկանք: Մօտ եկաւ, ասացին, գայլը ու բնի շորեք կողմը սկսեց պտուտ-պտուտ անել. լորձունքը բերանից շաղ տալով՝ ուզում էր քաղցած փորը մի բան քցել, բայց ճանգը ոչինչ չընկաւ, պոօշները լստելով՝ թողեց հեռացաւ:

— Ուղիղն ասա, գայլ ախպէր, հարցըն խորամանկ աղուէսը, այն հօ դու չէիր:

— Ել բան ու գործ չունէի, գալիս էի ձեր աղուէսներիդ մի մատը ձագերը տանելու, յօնքերը կիտեց ու բարկացած պատասխանեց գայլը. քեզ էլ որ ողջ-ողջ խժում ատամներիս տակին՝ շեմ կշտանայ:

— Ուրեմն ձեր ազգականներից մէկն ու մէկն է եղել, նենգամտութիւնով, հաւատալ ձեացնելով, ժպտալով՝ ասաց աղուէսը. փորդ որ քաղցած լինի՝ մի պստիկ ճիճուի համար էլ չնորհակալ կլինիս:

Բանիցն երեսում էր, որ հէնց այդ գայլն է եղել աղուէսի ձագերի յետեից գնացողը. էլ չհամարձակուեց, որ աղուէսի աշք ու յօնքին մտիկ տայ: Սկսեց խօսակցութեան առարկան փոխել, խօսքը կտուրը քցել:

Հարցըն աղուէսին.

—Աղուէս բաջի, քո բունդ ու բնակարանդ մը-
տեղ է:

—Հեյ, բարեկամ, պատասխանեց խորամանկը,
այնպէս մի յետ ընկած ու կորած տեղ եմ կենում
ես, որ պառափ, թէ պիտի գտնես:

—Բունը դու ինքդ ես շինել:

—Ոչ, ինքս չեմ շինել, փորսողի բնումն եմ կե-
նում: Մեր ձեռիցն երբ կզայ փորսողի նման շինե-
լը: Ես ինքս փորսողներին չեմ սիրում, բայց խըզ-
մտանքով կասեմ, որ փորսողի նման բուն ոչ ոք չէ
կարող շինել. յարմար, լայն, արձակ, այնքան մա-
քուր, որ իւղը թափուի՝ կվերեքուի. այստեղ նըր-
բանքցներ, այնտեղ օդանցքի խողովակներ, նստիք
բնիդ մէջ ու ազատ շունչ քաշիր, հէնց իմանաս լայն
դաշտերումն ես, քաղցր օդը շարունակ խաղում է:

—Ռւրեմն ինչու է փորսողն իր բունը վէր դցել
ու հեռացել, հարցըն զայլը:

—Լոիր, սիրելի բարեկամ, քեզ մէկ-մէկ բոլորը
պատմեմ:

Գ.

—Գիտես բանն ինչումն էր, սկսեց ազուէսը.
Ես մտքումս դըի տուն ու տեղ զնել փորսողի բնի
մօտեկը: Բայց ախար փորսողին ով չէ ճանաչում.
Դէմքը հէնց իմանաս ձմեռուան երկինք, երեսիցը
ժանգեր է թափուոմ, ընկեր-հարեանութիւնից փախ-
չող. չէ սիրում, որ կողքովը մի թևաւոր անզամ
անց կենայ. իրան որ մնայ՝ ուզում է որ անտառը

միայն ինքը լինի: Ինձ որ շտեսաւ՝ քաջքերը հաւա-
քուեցին, բարկութիւնից ինքն իրան կտրատում էր:
—Ի՞նչ ես, անհանգիստ շարաճճի, եկել կողքս
մտել, մի օր ասաց ինձ փորսողը:

—Թէկուզ, ասենք, անհանգիստ էլ լինիմ, բայց
քեզ պէս հօ չեմ. տեսնում ես վրայիս թանկագին
մուշտակը. իսկ մի քեզ վրայ նայիր, ինչի նման
ես. զունչդ խոզի, մուշտակիդ մազերը խոզի
ձաղկամազ թաթերդ՝ արջի, պոչդ՝ շամ ասն
տեսնեմ, ինչ ես դու. թէ զազան ասենք՝ զա-
զան էլ չես:

Աստուած իմ, էն ինչպէս բարկացաւ ու կատագեց
մեր փորսողը:

—Գո՞յ անպիտան, ասաց ինձ, կընկնես գիւղե-
րը, հաւեր կգողանաս, չները յետեկիցդ կընկնեն ու
յետոյ քեզ կթողնեն ու ինձպէս Աստծու զառը ան-
մեղ արարածին կրունեն:

—Ճամտ էլ լաւ կանեն. քո հայն է. ախար էս
անծայր ու անտակ անտառը միայն քեզ համար հօ
չէ ստեղծուած:

—Անտառումը քիչ տեղ կայ, ասաց փորսողը,
որ եկել ես կողքս մտել, ինձ հարեան ես դառնում:

—Հապա չէ, պատասխանեցի, պէտք է զայի
հրամանոցդ բարեհաճ կամքը հարցնէի, քո միեւու-
թիւնից իրաւունք խնդրէի: Հերիք է մըթմըթաս,
ծոյլ անշնորհը, որտեղ սիրտս կուզէ՝ այնտեղ կընա-
կիմ. զնա, անձունի, զնա կողքիդ վրայ փոռիր
ու խոմփալով շնթռկիր, որքան քո սիրտը կցան-
կանայ:

Ուսեց ու փքուեց մեր փորսողը ու զլոր-

մլոր գալով զնաց մտաւ իր բունք: Ես մտածեցի. ինչու եմ դլուխ տրաքացնում, սրա հետ վիճում վիճաբանում. արի այնքան զզուացնեմ՝ որ վեր կենաց քաշուի: Փօրսողը որ կայ՝ մի մաքրասէր կենդանի է. չէ սիրում, որ իր բնի մօտերքը մի կտոր աղտոտութիւն լինի: Սպասիր, տես քո գլուխդ ինչ եմ բերում, միտք արի ես, ու աշխարհումն աղք ու կեղտ շփողի, կրեցի թափեցի նրա բնի չորս բոլորքը: Դուրս էր գալիս մըթմըթալով ու փնթփընթալով, փոսեր քանդում ու այն աղբերը լցնում մէջերն ու թաղում: Նա թաղում էր հեռանում՝ ես նորից ազտոտում էի: Այնքան արի, մի քանի օր այնքան նեղացըի, որ շկարողացաւ դիմանալ. թողեց ու քաշուեց:

— Զեր էղ գող աւազակներիդ ձեռքից, ասաց ինձ սիրելի հարևանս, ոչ մի օրինաւոր կենդանի հանգստութիւն չի ունենայ:

Մէկ մտածեց ընկնել քամակիցս, որ ինձ բռնի, բայց հնար կար, կարո՞ղ էր անճոռնի տեղովն ինձ հասնել: Այն զնալն էր, ինչ զնաց: Սպասեցի մի օր, երկու օք. տեսայ յետ չեկաւ, զնացի փառաւորապէս նրա բնին տիրացայ:

Ներս ես մտնում թէ չէ՝ առաջդ գալիս է մի նըբանցք, նըբանից յետոյ՝ մի մեծ սենեակ է բացւում. Ներս որ մտայ՝ մտիկ տալով շկտացայ, մաքրութիւն, փափկութիւն, բոլոր յատակը մամուռ է փոռւած: Սենեակի միջից երկու դուռն է բացւում, մէկը մտնում է մառանատունը, միւսը մի փոքրիկ խուց. մառանը լիքը պաշարեղէն է, մի կողմը՝ զանազան արմտիքներ, միւս տեղը՝ կաղինը կի-

տուած, մի անկիւնումը շատից քչից մեղքահացեր դարսուած: Ես այնպէս կարծեցի, թէ խցիկի մէջն էլ պաշարեղէն կգտնեմ. սկսեցի քըքըել, քջըել. տակից դուրս եկաւ, որ իր կերածի աւելորդներն էին գետնի մէջ թաղուած. օրինակ՝ օձի կամ զորտի գլուխներ և շատ ուրիշ բաներ: Էլ իմ քէֆին քէֆ չէր հասնի, կեր, խմիր, ուրախացիր:

— Դուք աղուէմներդ ո՞րտեղ լինիք որ շապրէք, մըթմըթաց գայլը. զուք զըաղացի բուկն ընկնէք՝ դուրս կպըծնէք, (ամեն փորձանքներից ձեր զլուխը դուրս կպըծացնէք):

— Այդպէս չէ, գայլ ախպէք, պատասխանեց աղուէսը. տեղ կայ, գլուխներս կպըծացնենք, տեղ կայ՝ այնպէս կթաղենք, որ քանի շարժուենք՝ այնքան խոր կերթանք: Տեսնում ես, սրանից էլ մեծ փորձանք, որ երկուսով միասին մէջն ենք ընկել ու մոլորուել: Հա, բարեկամ, աշխարհս փորձանաց տուն է. ընկել ենք, պիտի համբերենք: Լաւն այն է, շատ շմտածենք: Օհ, միտքս որ գալիս է՝ մազերս բիզ-բիզ են լինում: Այ, հիմի ես քեզ կըպատմեմ, թէ ջահէլ ժամանակո ինչ տեսակ փորձանքի հանդիպեցի:

¶.

— Վաղուցուան բան եմ պատմում, սկսեց աղուէսը. Ես շատ փոքր էի, նոր էի ոտն եղել: Ոչինչ բանի պակասութիւն չէինք քաշում, մի պատուական էլ բռն ունէինք, տասը կողմից ել ու մուտ

անելու տեղ ունէր. եթէ մի ծակից քիչ երկիւզ
 էինք զգում՝ ձեռաց միւս ծակն էինք մտնում ու
 դէ, հիմի ինչքան կուզես՝ պտուտիր, որ մեզ գտնես:
 Անտառի հէնց բերանումը մի պտուկ գիւղ կար.
 Ասուածած չէն պահի, օր չէր անց կենում, որ հա-
 ւեր չուտէինք. այ երջանիկ ժամանակ: Ասենք,
 իրաւ է, վատ եղանակներին մի քիչ տխուր էր
 անց կենում մեզ համար, մնում էինք բնի մէջ կուշ
 եկած. բայց հէնց որ օրը պայծառանում էր՝ այն-
 քան էինք խաղում որ գլուխներս ուռչում էր: Զրդ-
 ում էր մեր մայրիկը քարափի լանջին ու արմկող
 անում, իսկ մենք տափի վրայ, բաց տեղը՝ սկսում
 էինք խաղալ ու վազվել մայրիկիս չորս բոլորքը:
 Մէկ էլ բերում էր մայրիկս մի կենդանի մուկը,
 տալիս մեզ ու ինքը հեռուից մտիկ էր տալիս և
 զուարճանում, տեսնելով թէ ինչ ենք բերում խեղճ
 մկան գլուխը: Երբեմն էլ թռչուններ որսալ էր սո-
 վորեցնում մեզ. հէնց տեսնում էր, որ թռչնիկը
 թփերի միջից սկսեց իւր ծլվոցը՝ զգուշութեամբ
 մարազ մտած՝ մօտենում էր ու հափփ, բռնում էր
 ող-ող ու տալիս մեզ: Էս էլ քեզ մի նոր զուար-
 ճութիւն: Չատ սիրում էր մեր մայրը, որ մենք
 զուր տեղը զատարկ բաներով ժամանակ չլիրցնենք.
 ինչ որ անելու էր՝ ատում էր, առաջ լաւ մտածե-
 ցէր, չափ ու ձև արէր, տասը չափեցէր, մէկ կը-
 տրեցէր: Երեկոնները մայրիկս գնում էր որսի. ախ,
 անուշիկ մայր, այն ինչպէս էր գնում—հանդարտ,
 զգուշութեամբ, աշքերը չորս կողմն ածելով, հոտո-
 տելով.... գնում էր ու գնում, իսկ մենք նստում
 էինք բնի առաջին ու աշքերս ջուր կտրած սպա-



սում: Երբեմն որ շատ ուշանում էր՝ մենք սկսում
էինք տրտմել և մղկտալով կողկոնձալ:

Հինց վերադառնում էր թէ չէ որսատեղից՝ գու
էնտեղ տես մեր ուրախութիւնն ու խնճոյքը. բե-
րում էր երբեմն նապաստակ, մի անգամ հաւ, միւս
անգամ բաղ: Մաս-մաս էր անում, բաժանում էր
մեզ ու ասում.— կերէք, ձեզ անուշ, քաղցրիկներս,
կերէք որ մեծանաք, ուժի գաք, կազդուրուիք. շատ
չի քաշի, ձեզ առաջ կանեմ, կտանեմ դաշտը, էն-
տեղ որս անել կսովորիք. թէ չէ աշունքը որ գայ՝
ես ձեզ բաց կիթողնեմ, ինձանից կհեռացնեմ, ու
եթէ որս անելու վարժուած չէք լինի՝ քաղցած կը
կոտորուիք: Հա, լաւ էր, լաւ կեանք էինք քաշում,
բայց ափսոս, մեր ուրախութիւնը քթերիցս զուրս
եկաւ: Գիւղացիք շներն արձակել էին մայրիկիս
վրայ: Ո՞նց է փախչում, ո՞նց է վազում նետի պէս.
լոյս դառնաս, այ իմ մայր, ինչ անէր, շների ճան-
դից ազատուելը հեշտ բան չէր: Հասուէհաս են
զազանները, որտեղ որ է վեր պիտի կոխէին խեղճ
ծնողիս. Նրա ոտքերումն էլ ոյժ չէր մնացել: Ի՞նչ
անէր, ինչ շանէր, որ պլծնէր. մէկ էլ՝ պոշը թափ
է տալիս մի կողքի վրայ ու կուշ գալիս: Թէ ինչ-
պէս հասան շները, ինչպէս զլսովը թռան, վրայո-
վըն անց կացան ու չնկատեցին իրանց որսին՝ մի
հարցներ. աղեցին, մաղեցին ամենայն տեղ, ու մայ-
րիկիս շգտան: Այդ բոլորը լաւ, բայց փորձանքի
մեծը վերջումն էր. մեր կոյր բախտից՝ անիրաւ շներն
եկան և ուղիղ մեր բնի զլսին կանգնեցին ու սկսե-
ցին քանդել, քարտատկել մեր կացարանը. փորձում
են ու փորում: Կուշ ենք եկել մենք բնի մէջ ու

սրտերս տրփտրփում է. աշկարայ տեսնում ենք, որ
մեզ պլծնում չկայ, որ ծակի բերանին մօտենում
ենք՝ շներ են կանգնոտած.... Ա՛խ, այն ինչ օր
էր. ես, քոյրերս, եղբայրներս—բոլորս միասին ըն-
կանք մարդկանց ճանզը: Հիմի լացիք, զայլ ախ-
պէր, թէ որտեղ էր փորձանքը. բոլորին մէկ-մէկ
կոտորեցին ու ինձ միայն կենդանի թողին: Տարան
ինձ իրանց տունը, վզնոցը շինքս անց կացրին ու
բազումը շղթայով ծառիցը պինդ կապեցին: Լալիս
եմ, աղի արտասունք եմ թափում, մայրիկիս եմ
միտքս բերում: Զուր: Մութն ընկաւ, զիշեր է, բա-
զումը հնդուհաւեր են ման զալիս. երկի մոռացել
էին տուն անել: Նստել եմ ու մտածում: Ուր ես,
մայրիկ, այստեղ պէտք է գտնուէիր, իսկ քո տեղն
է: Տօ, այ քեզ բան. բերանիս խօսքը դեռ չէր
վերջացել՝ մէկ էլ այն եմ տեսնում, որ մայրիկիս
բազի գուան առաջին է. էնպէս կամաց, էնպէս
սուսիկ փուսիկ է զալիս, որ կարծես ոտերը զե-
տինը շնն առնում ու օգի մէջ է ման զալիս. մէկ
տեսար՝ կանգնեց, մէկ փորսող տուեց, երբեմ՝
թփի տակին կծկուեց... Անդաղար քիթը վերի
բունած՝ այս կողմն այն կողմը հոտոտում էր. մօ-
տեցաւ լուսահոգին պարսպին ու փորի վրայ երկար
ու մէկ ձկուեց. հաւասարուել է խոտի հետ ու
ոչինչ չէ երեւում: Ուրախութիւնիցս սկսել եմ կող-
կոնձալ ու մայրիկիս մօտս կանչել. իսկ նա պառ-
կել է ու անշարժ մնացել: Ճարս կտրեց, տագ արի,
ձէն ու ծպտուն շնանեցի: Այդ ժամանակը նա տե-
ղիցը կանգնեց, շորս կողմը լաւ աշք ածեց ու յան-
կարծ որ ծլունգ շեղաւ՝ պատի զլիսովն իրան

ներս գցեց՝ ոնց որ մի թռչուն։ Մօտեցաւ ինձ
ողորմելին ու սկսեց լալ ու մզկտալ. — ազիզ բա-
լուկս, այդ ինչ կըակի մէջ ես ընկել դու։ Յետոյ
նա հարցրեց. հապա ուր մնացին մէկէլ քոթոթ-
ներս։ — Բոլորին, ասացի, աշքիս առաջին կոտորե-
ցին։ Ենթախտ իմ ծնող. ինչ սուզ ու լաց, ինչ ախ
ու ոխ, իրան կտրատում էր. անդադար լիգում էր
ինձ ու դառն արտասունքն աշքերից ջրի նման թա-
փում։ Կուշտ ու կուռ սուզ անելուց յետոյ՝ նա
վեր կացաւ ու սկսեց հնդուհաւերին խեղդոտել։
Եյնպէս եռանդով խեղդոտում էր, որ ես իմ դար-
դերս մոռացայ։ Օձի պէս սողալով՝ մօտենում էր
հնդուհաւին ու էլ շարժուելու ժամանակ չէր տա-
լիս, ատամները թաղում էր կոկորդի մէջ, ու փառք
յաւիտեանս յաւիտենից, վերջացաւ ամենայն ինչ։
Տասնուշորս հատ հաշուով համարքով հնդուհաւը
խեղդոտեց նա, բերեց առաջիս շարեց։ Դէհ, քոթո-
թիկս, ասաց նա, էլ քաղցած չես մեռնի։ Մնաս
բարի։ Թէ որ, բան է, կենդանի մնացիր՝ անհոգ
շմաս. յարմար միջոցը ճանպեցիր թէ չէ՝ պոկ
արի ու շունչդ անտառումը քաշիր։ Ո՛վ զիտէ, շատ
կարելի է, նորից իրար կհանդիպինք։ Ավտոս, էլ
չհանդիպեցինք. լսիր, թէ ականատեսներն ինչ պատ
մեցին վերջերքը, թէ ինչ փորձանքներ են հասել
մօրս գլխին։ Մէկ էլ մայրս լսում է, որ անտառը
դզբում է. աղմուկն, աղաղակն աշխարհը թնդա-
ցնում է։ Ի՞նչ անէր խեղճը. փախիր որ կփախ-
չիս. փազում է, փազում ու դէմ ու դէմը որսորդի
առաջին մնում կանգնած։ Տալիս են ու ոտքը կո-
տրում. սկսում է ջրատարս երեք ոտնանի փազել,

իսկ կոտրած ոտքը զնում զալիս է ու շրմալով
դիպում իր գլխին։ Բարկանում է մայ-
րիկս, յուսահատուում է ու նստում՝ կրծելով, ծամ-
ծմոտելով՝ ոտքը կոտրած տեղիցը կտրում, շպրտում
ու ինքը երեք ոտքով փախչում։ Պատմում էին, որ
այն օրից ցաւազարւում է ողորմած հոգին ու տասը
տարեկան հաստկում՝ կեանք ու արեն աշխարհին
բաշխում։

Ե.

Խերութեան մէջ ինչպէս էիր օրերդ անց կացնում,
հարցրեց զայն աղուէսին։

— Զեմ կարող գանգատաւոր լինել, զայլ ախ-
պէր, լաւ կեանք էի քաշում. Ուտելիք՝ ինչ որ կա-
մենաս, ինչքան կամենաս. տէրս խաթթիս չէր դիպ-
չում։ Կհաւատան, բարեկամ, այնպէս սովորել ըն-
տելացել էի, որ ուր գնում էր տէրս՝ ես յետեիցն
ընկած՝ նրանից չէի բաժանւում։ Մի բանով միայն
նա ինձ զգուացրել էր, մէկ-մէկ՝ մէկ էլ տեսար,
որ զրկեց ինձ ու սկսեց մուշտակս սղալել, շոյել։
2կարծես թէ սրտի նեղութիւնից կամ չար մտքով
էր անում, ոչ, շատ սիրելուցն էր այնպէս անում.
բայց, արի տես, որ նրա այդ փաղաքշանիքներն ու
խաղերը ինձ համար մահ էին. զուր չէ ասած, թէ
կատուի խաղը մկանը մահ է։ Ասենք, ես չէի էլ
ցոյց տալիս, թէ իր խաղ ու պարերը սրտովս չեն.
մտիկ էի տալիս երեսին, ժապտում էի, պոշս բուլղի
բուլղի անելով՝ շարժում էի, ձեռքերը լպսում

էի... բայց իմ մէջս միշտ այն էի մտածում, թէ
 ո՞նց անեմ, որ օր առաջ փաստ-փուսէս քաշեմ ու
 սրա ձեռից՝ հայդէ: Պէտք է ասած, որ երբեմն
 դուրս էի պըծնում ճանգիցը. այդպիսի ժամանակն
 արդէն նա ինձ հեշտութիւնով չէր կարողանում
 բռնել. ուրիշ բան էր՝ եթէ մի անկիւն էր կոխում
 ու բռնում: Մի անգամ տէրս իր քնքշութիւններովն
 ու կատակներովը սաստիկ բարկութիւնս բերեց ու
 ճանձրացրեց. ես ինչ անեմ, սրտիս հուպ տուի ու
 ձեռքը պինդ կծեցի: Մէկ էլ որ զլխիս վեր հա-
 տեց՝ աշքերս մթնեցին: Էլ չէր հարցնում. ինչով
 պատահում էր, ինչ տեղս հասնում էր՝ թրխկացնում
 էր: Երկու օր, երկու գիշեր, գայլ ախպէր, ջարդ
 ու փշուը եղած էի թրե գալիս: Նըանից յետոյ՝
 խելքի եկայ. հէնց որ սկսում էր մուշտակս զզել,
 զզզզել, սիրել ու կատակներ անել՝ ես աշքերս
 երեսին էի քցում ու ժանիքս բաց անում, ժմտում,
 ժնգուտում: Ի՞նչ արած, ահը շատ է, քանց մահը:
 Տես ինչ տեղն էր հասցըել. մէկ էլ՝ բերանս մի
 կտոր միս է դնում. հէնց ուզում էի բռնել՝ միսը
 դուրս էր հանում ու տեղը իր անձոռնի ու զզուելի
 մատը բերանս կոխում... փորս եփ էր գալիս, կա-
 տաղութիւնից ողջ մարմնով դողում էի, բայց ճարս
 ինչ. կըկակես, կուտես. քծնուելով սկսում էի ատամ-
 ներս բաց անել ու ժպտալ: Լաւ չէի կարողանում
 տանել, բայց համբերում էի ու վիզս եօթը թիզ
 երկարացնում: Բայց հոգի ունիմ տալու, գայլ
 ախպէր. ինչքան նա ինձ սիրում էր. միս էլ էր
 տալիս, մկներ էլ էր որսում ինձ համար, թռչուն-
 ներ էլ էր ձեռք բերում. էլ ինչ ատես, որ չէր

անում: Մի մեծ ցաւ էլ չներն էին ինձ համար.
 տեսնելուս սրտաճաք էի լինում. բայց տէրս, հէնց
 իմանաս վրաս ծիծաղելու համար, շանը բռնում էր
 ու քաշ տալի մօտս: Մի սկ բըդոտ շուն ունէր նա,
 սատկի նա, սատկի. անիծածն այնքան էր հաջում
 վրաս, որ լացս բերում էր, քիչ էր մնում՝ հոգիս
 քաղուէր: Կուզես հաւատո՛, գայլ ախպէր, կուզես
 ոչ, գիշերներն էլ երազումս չներ էի տեսնում.: :
 Ես սրահում էի քնում: Մի անգամ՝ տէրս երեք օր
 երեք գիշեր սրահիցը դուրս չթողեց: Տխրեցի, տըրտ-
 մեցի, ու մտքումս զըի փախչել: Սկսեցի գիշերնե-
 րը գետինը փորել: Փորեցի, ծակ բաց արի ու
 աղատութիւն... Մութ գիշեր, ճանապարհն առա-
 շիդ, բարով խէրով գնաս:

9.

Դնում եմ, գայլ ախպէր, ու սիրոս անդադար
 տըկ-տըկ-տըկ. տէրս մի արասցէ, եթէ չները
 հոտս առնեն, ողջ տեղ չեն թողնի. բայց արի տես,
 որ երբ հաւարնի առաջովն անց էի կենում՝ սիրսս
 չհամբերեց, ձեռաց մի հաւ խեղզեցի ու հետս
 վերցըի: Ընկայ դաշտը, մի փոսում նստեցի ու ա-
 նուշ ընթրիք արի: Աղօթարանն սկսեց բացուել,
 մտիկ եմ տալիս՝ անտառը քթիս տակին է. սկսեցի
 զլխապատառ վազել, մէկ էլ՝ առաջս մի մարդ է
 է դուրս գալիս... երկիւղից սիրտս փորս ընկաւ...
 մտածում եմ, ինչ պէտք է անեմ. թէ ոտքերիս
 զօր եմ տալիս ու փախչում՝ հաւանական է, որ

շուտով կնկատէ: Զգուեցի խոտի մէջ ու մեռածի պէս ոտքերս փուեցի. իսկ մարդը հետզհետէ մօտենում էր: Լսում եմ, քթի տակին ինչ-որ մըռմոռալով երգում է... Աչքիս պոշովը մտիկ տամ՝ ինչ տեսնեմ. ամենակին նա վրաս չէ նայում, գլուխը կախած՝ իր ճանապարհը բռնել է ու դունդունալով գնում... Պառկել, տագ եմ արել... քո տունը չքանդուի... ուղիղ գալիս է վրաս... Օ՞հ, ինչ պէտք է լինի արդեօք... Մօտեցաւ, մէկ խփեց ինձ ոտքով, երկու խփեց – ամենակին մի մազս չեմ շարժում... Յանկարծ՝ ձեռքը քցեց պոշս, բարձրացըրեց, օդի մէջ տարաւ բերեց, քցեց շալակը ու գնաց:

Էս չեղաւ, մտածեցի, վերջին օրս է. սա ինձ կտանի ու կաշիս կրերթէ: Բռնել է մարդն իր ճանապարհն ու երգելով գնում: Մէջս էլ ոյժ չէ մնացել, որ երկար ժամանակ պոշիցս կախ դիմանամ: Մի ճարպիկութիւն գործ դըի ու պինդ կծեցի նըրան: Խեղճ մարդ, այնպէս ճշաց ու գոռաց... զետնովը խփեց ինձ ու երկու ոտի փախանակ՝ երկուսն էլ փոխ առաւ, ու փախիր որ կփախչես:

Դէհ, ինչ ես անում, աղումս, շուտ, քեզ քցի անտառ. էլ ով կարող է ինձ տեսնել: Գնացի անտառումը ամենաթանձը մաշառուտների մէջ պառկեցի, սկսեցի հանդստանալ ու ինձ ու ինձ միտք անել... Ի՞նչ պիտի լինի իմ ճարը... սաստիկ տըխրել եմ. մի կողմից տիրոջս համար եմ ցաւում, միւս կողմից՝ իմ գլխիս հոգսն եմ քաշում, վախում եմ: Հայ, գայլ ախպէր, խամացել էի, իմ սեփական խելքով ապրուստ անելը մոռացել էի, յետ էի սովորել: Մտածում էի, ինչ պիտի լինի իմ գլխի



ճարը, այստեղ ինձ ով պիտի ուտացնէ ու խմացնէ: Եւ իրաւ, սկզբներումը շատ դժուար էր ինձ համար: Օրերով՝ քաղցած էի թրե գալիս: Ճնորհք չունէի, որ մի թրջուած, տմսկուած ձկնակուլի ձագ բռնեմ, մուկը ո՞րտեղ կմար... Բայց շատ շը քաշեց, ամեն բանի վարժուեցի: Այդ տարին նապատակները շատացել էին: Մարադ էի մտնում թփի տակին ու սպասում. մէկ էլ այն տեսնես՝ հատ աշքով շիլ մի նապաստակ դուրս պըծաւ, քիթն օգումը դէս ու դէն ման ածեց ու ականջները թափէթափ տուեց: Մտիկ ես տալիս—մի երկրորդն է դուրս թռչում: Գալիս են մեր լոշտականջանիքը ու սկսում են իրար հետ խաղս լինել. մէկը պառկում, ականջները զետնի վրայ փռում ու սպասում էր. մի ուրիշը տեսնում էր նրան ու ընկնում առաջինի զլիսին. այն կողմից՝ երրորդը, շորբորդը, հինգերորդը... հաւաքում են մինչև տասը... և սկսում են դիժ մողիներու պէս դաշտի վրայ վազվել.. Փորսող տալով մօտենում էի ծոյլ անշնորհներից մէկն ու մէկին... հափփ, և նախաճաշիկս պատրաստ էր:

Վերջացը աղուէմն իր պատմութիւնը և հարցը գայլին.

— Իսկ դու, գայլ ախպէր, ինչո՞ւ մի բան էլ ինքդ չես պատմում:

— Զարմանում եմ քեզ վրայ, աղուէս բացի, պատասխան տուեց գայլը, թէ ինչ ես լեզուդ բլբուլ շինել, կարծես քէֆերի ու խնճոյըների զլիսի ես և ոչ թէ հորի մէջ:

— Ե՞ն, գայլ ախպէր, մահը թէ այսօր, թէ հա-

ըիւր տարուց յետոյ. տասն անդամ հօ չպիտի մեռնենք, մահի ձեռիցն էլ գախչելու չենք:

Աղուէսի խօսքը բերնումը կիսատ մնաց. սայլակն եկաւ հորի զլիսին կանգնեց: Որսորդն սկսեց ինձ դուրս քաշել. խորամանկ աղուէսը փէշիցս կախ ընկաւ, դուրս թռաւ, ու գնա որ կերթաս:

Անիրաւն իր մօրն էր կարծես քաշել, մօր պէս տակէ տակ հնարագէտն էր:

— Դէհ, երեխէք, հերիք է, վերջացը Զարման տատը. սեղանը պատրաստ է, ճաշելու ժամանակ է:



4208

2013

105	Կրէծ, Գիլլ	Յասհիր, Մարգմ. կ.	Մ.	Յ.	Յ.	5
106	Ազամայ մարգմանան, թարգմ. Տ.	Յովհաննիսհանի				15
107	Մուֆլու, Արդի, Թարգմ. Յ.	Յանենեանի				10
108	Յնձրեայթ հողագորչ. 2.	Յարգինի, թ.	կ.	Մ.	Յ.	7
109	Նապատակ. թարգմ. օր. Յ.	Յուլիջանեանի				7
110	Երանի Մարգն, թարգմ. Մեղնիկեանի					10
111	Բամէ և Հաւլիկո, Ջէլո., Թարգմ. Յ.	Խան-Մաս.				60
112	Վզգային Հաջեր. գ. տպ. Յ.	Պարոնեանի				1
113	Զբոյցներ ն. Փարակինի, թարգմ. Մ.	8. Անդր.				15
114	Քնկերասէք Վահանի, Յ.	Յակոբջանեանի				10
115	Յնգալո գերձակը					40
116	Մուխատիտիկ					40
117	Քնած գնկեցկունի				ՀՔԼՂ	40
118	Կարմիր Վլուարկ					40
119	Գուլլիգէրը թշուկների աշխալ ում			ԱՊՈՒԱ-		40
120	Նուպատակի և ոզնու զրագր					40
121	Գուլլիգէրը հակաների աշխալ հում			ԳԵՐ-		40
122	Լուսերեսուիկ					40
123	Ճշմարտութիւնը միշտ յաղթումէ			ՆԵՐՈՎ		40
124	Օրերոնի հրաշալի եղչիւրը					40
125	Քաւիթ Կոպպերփիլ'զ, 2արյո Գիկկենսի, թ.	Պ.	Պ.	Պ.		1
126	Քարնկիրներ, Անհնեսկայա, թ. Կ.	Գիլյադ.				50
127	Խժառններ, պրօֆ. Յոզե. թ. Լեռն Մ.	Ազամ.				50
128	Քնարի պատմուածներ, Խօդի, թ. Վ. Փ.					40
129	Հոօ կինը, Ա. Անարսնեանի					40
130	Կեսնիքի տեսաբուններ, Քասիմի					50
131	Անկի շինուներ, Ցակկի, թ. Խ.	Մարտիրօսեանի				50
132	Գուլլիգէրի ճանապարհորդ. (պատկ.) թ.	Պ.	Պ.	Ազայեանի		50
133	Թաշունների աշնան. տեղափոխ., Բօգգանսօվի					5
134	Վենետիկի վաճառականը, Շէկալ. թ. Յ. իւ. Մասնէ.					40
135	Երկաչալործ և հրաբր. յնաներ, Լունկ. թ. Լ.	Մ.	Յ.	Ա.		15
136	Վէպիկներ և զրոյցներ Պ.	Մաղարոսի, թ.	Հ.	Ա.		1
137	Բուգգչա և իւր զարդարականի Ժիմնէ, Ստ. Մ.					20
138	Երկիք և երկնքի մասնի, Լունկնիկի, թ. Դիլինադ.					10
139	Վոնֆուցիս, Կ. Բազր.					20
140	Ազգետիրական օղեգործութ. Յ.	Պիտրոսեանի				40
141	Գիւզատն, մերին., Լ.	Խան-Ազամնի (250 նկարով)				40
142	Կինդարիների աշխարհ. Վ.	Լունկնիկի (պատկեր.)				30
143	Ըրբայ Լիր, թ. անդ. Յ.	Մատենանի				50
144	Յն երթառ. Մէնկեցվէլ և ար. Լիւլցիան.					1. 50
145	Բնչ է Տէղիանդ. Կոտ Պաւլիկալի, թ. Պ.	Պ.	Պ.	Ս.		10
146	Մարդ սմ. Վ. Էրեսիսի, թ. Ստ. Մայիսանեց.					1
147	Օդր և կեանքր. թ. Ե. Տէր-Յակոբեանց					10
148	Խորստանկ աղաւնը. թ. Պ.	Պաօշեանց				10